Երևանի Մ. Խորենացու անվան հ. 143 հիմն. դպրոցի Vա դասարանի դասղեկ Ա. Սահակյանի աշխատանքային պլան

II կիսամյակ

2022-2023 ուստարի

Դասարանի նկարագիրը --- Դասարանում սովորում է 20 աշակերտ:Բոլորն էլ աշխատասեր են,սիրով են կատարում բոլոր հանձնարարությունները: Ընկերասեր են և պարտաճանաչ:I կիսամյակում գերազանց առաջադիմություն է ունեցել երկու աշակերտ, անավարար ունեցողներ չկան:Առաջադիմությունը 100 % է, որակը՝ 50 %:

Ուստարվա ընթացքում նախատեսվում է տարաբնույթ աշխատանքներ կազմակերպել անհատի ինքնուրույն մտածողության ձևավորման,դատողություններ և եզրակացություններ կապարելու կարողություններն ու հմտությունները զարգացնելու համար;Նախատեսվում է կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ,գրքի քննարկումներ, զրույցներ հայրենիքի, ազնվության, բարության, ներողամտության մասին,սեր արթնացնել գրքի և ընթերցանության հանդեպ:

Գեղագիտական դաստիարակություն _____ Աշակերտների գեղագիտական ճաշակը բարձրացնելու,գեղեցիկի հանդեպ սեր արթնացնելու նպատակով կկազմակերպվի այցելություն մատենադարան,պատկերասրահ, կդիտեն ներկայացում:

Գրքի և ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու համար կազմակերպվի Գիրք նվիրելու օր , Կկազմակերպվլ նաև կարդացած գրքի քննարկումներ, ասմունքի ժամեր:

Հոգևոր դաստիարակություն____ Ծանոթացնել քրիստոնեական տոներին, արժեքներին, ավանդույթներին,այցելել հոգևոր մշակութայի օջախներ:Հասկանալ հոգևոր տոների նշանակությունն ու դերը մեր ազգային նկարագրի պահպանման գործում,անդրադարձ կատարել Զատկի տոնին:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն _____ Աշակերտների մեջ հայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով կազմակերպել զրույցներ հայրենիքի, հայրենասիրության մասին:Զրուցել Հայոց բանակի օրվա,ազատության, հայրենասիրության մասին:Նշել Հայոց բանակի օրը:

Բնապահպանական դաստիարակություն _____ Աշակերտների մեջ բնության նկատմամբ սեր և հոգատարություն զարգացնելու նպատակով զրուցել բնության դերի, նշանակության մասին:Սովորեցնել մաքուր պահել բնությունը ,հոգ տանել նրա մասին;մշակել կանաչ անկյունը:

Աշխատանքային դաստիարակություն _____ Կարևորել շրջակա միջավայրի մաքրությունը,մասնակցել դպրոցում կազմակերպվող աշխատանքներին, շաբաթօրյակներին:

Ուստարվա ընթացքում դասեր լսել դասարանում դասավանդող ուսուցիչների մոտ:

Ծնող- ուսուցիչ կապը ապահովելու նպատակով կկազմակերպվեն ծնողական հանդիպումներ և ժողովներ:

Անցկացնել դասղեկի ժամեր, որոնց ժամանակ կզրուցենք ազնվության, ընկերասի-
ության, ներողամտության,քաղաքավարության, պատասխանատվության և այլ
թեմաներով:

II կիսամյակում կազմակերպվող միջոցառումներ,այցելություններ մշակութային օջախներ

1.	Հայոց բանակին նվիրված դաս- միջոցառում	հունվար
2.	Մայրենիի օր	Փետրվար
3.	Գիրք նվիրելու օր	Փետրվար
4.	Մայրության և գեղեցկության օրվան նվիրված ասմունքի ժամ	Մարտ
5.	Այցելություն Մատենադարան	Մարտ
6.	Այցելություն պատանի հանդիսատեսի թատրոն	Ապրիլ
7.	Զատկի տոնին նվիրված միջոցառում	Ապրիլ
8.	Դասական երաժշտության ունկնդրում	Մայիս
9.	Զրույց հայրենիքի, հայրենասիրության, մասին	Մայիս
10.	Ուսումնական տարվա ամփոփում՝ ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին	Մայիս